ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

13 հոկտեմբերի 2025թ. **N 60-Լ**
ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 51-Լ ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասով և 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով և 4-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի կառուցվածքը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի կառուցվածքում՝

1) անձնակազմի կառավարման բաժինն անվանափոխվում է մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի.

2) արտաքին կապերի վարչությունն անվանափոխվում է միջազգային հարաբերությունների և հանրային կապերի վարչության.

3) տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվության վերլուծության վարչությունն անվանափոխվում է տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվության վիճակագրության վարչության.

4) ֆինանսատնտեսական վարչությունն անվանափոխվում է ֆինանսական կառավարման և հաշվառման վարչության.

5) իրավաբանական վարչությունը բաժանվում է՝ ստեղծելով իրավաբանական վարչություն, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների հետ կապի վարչություն, ուսումնական կենտրոն:

4. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի ուսումնական կենտրոնը գործում է վարչության կարգավիճակով:

5. Ուժը կորցրած ճանաչել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2025 թվականի սեպտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2019 թվականի մարտի 20-ի N 26-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 51-Լ որոշումը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հոկտեմբերի 16-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Վ. Հ Ո Վ Ա Կ Ի Մ Յ Ա Ն**

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2025թ. հոկտեմբերի 13-ի N 60-Լ որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 194-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) անկախ պետական մարմին է, որը կազմակերպում է Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, հանրաքվեները, ինչպես նաև վերահսկողություն է իրականացնում դրանց օրինականության նկատմամբ:

2. Հանձնաժողովը կազմավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքներով սահմանված կարգով:

3. Հանձնաժողովը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, միջազգային պայմանագրերի, «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք), նորմատիվ իրավական այլ ակտերի և սույն Կանոնադրության հիման վրա:

4. Հանձնաժողովն իր իրավասության սահմաններում ընդունում է ենթաօրենսդրական նորմատիվ, անհատական և ներքին իրավական ակտեր:

5. Հանձնաժողովն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր անվանմամբ կնիք, դրոշմակնիք, ձևաթուղթ: Հանձնաժողովն ունի խորհրդանիշ և կարող է ունենալ անհատականացման այլ միջոցներ:

6. Հանձնաժողովի կառուցվածքում ընդգրկվում են Հանձնաժողովի նախագահի, Հանձնաժողովի նախագահի տեղակալի, Հանձնաժողովի քարտուղարի և անդամների, գլխավոր քարտուղարի, գլխավոր քարտուղարի տեղակալի, Հանձնաժողովի մամուլի քարտուղարի (այսուհետ՝ մամուլի քարտուղար), Հանձնաժողովի նախագահի խորհրդականների, օգնականի, Հանձնաժողովի նախագահի տեղակալի օգնականի, Հանձնաժողովի քարտուղարի օգնականի, հանձնաժողովի անդամի օգնականի, գլխավոր քարտուղարի օգնականի պաշտոնները և կառուցվածքային ստորաբաժանումները:

7. Հանձնաժողովի անվանումն է՝

հայերեն՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով (ՀՀ ԿԸՀ).

ռուսերեն՝ Центральная избирательная комиссия Республики Армения (ЦИК РА).

անգլերեն՝ Central Electoral Commission of the Republic of Armenia (CEC RA).

ֆրանսերեն՝ La Commission électorale centrale de la République de l'Arménie (CEC RA):

8. Հանձնաժողովի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, 0009, քաղաք Երևան, Գ. Քոչարի 21ա:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

9. Հանձնաժողովի գործունեության նպատակն է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Ընտրական օրենսգրքով սահմանված ընտրական իրավունքի սկզբունքների հիման վրա Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների, ինչպես նաև հանրաքվեների կազմակերպումն ու անցկացումը:

10. Հանձնաժողովի գործունեության խնդիրներն են՝

1) Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կազմակերպման և անցկացման իրավական, փորձագիտական, մեթոդական, կազմակերպչական, նյութական ապահովումը,

2) ընտրությունների և հանրաքվեների կազմակերպման և անցկացման հրապարակայնության ապահովումը,

3) ընտրությունների և հանրաքվեների կազմակերպման և անցկացման նկատմամբ վերահսկողությունը,

4) Ընտրական օրենսգրքի միատեսակ կիրառման ապահովումը,

5) ընտրությունների նախապատրաստման ու անցկացման համար ընտրական հանձնաժողովների և պետական մարմինների միջև փոխգործակցության ապահովումը,

6) ընտրական գործընթացների հետ կապված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ տալը:

11. Հանձնաժողովն իր նպատակների և խնդիրների իրականացման նպատակով իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունները՝ Ընտրական օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2025 թվականի մարտի 28-ի «Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կանոնակարգն ընդունելու մասին» N 34-Ն որոշմամբ ընդունված Հանձնաժողովի կանոնակարգով (այսուհետ՝ Կանոնակարգ) սահմանված կարգով:

12. Հանձնաժողովի առանձին գործառույթների իրականացման համար կարող են կազմավորվել աշխատանքային խմբեր, որոնք սահմանված ժամկետում իրականացնում են որոշակի աշխատանքներ:

Աշխատանքային խմբի աշխատանքների իրականացման և կազմակերպման համար պատասխանատվություն է կրում աշխատանքային խմբի ղեկավարը: Աշխատանքային խմբի աշխատանքների համակարգումը կարող է վերապահվել Հանձնաժողովի անդամներից մեկին կամ մի քանիսին:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

13. Հանձնաժողովը կազմված է Հանձնաժողովի նախագահից և Հանձնաժողովի վեց անդամներից:

Հանձնաժողովի նախագահի տեղակալը և Հանձնաժողովի քարտուղարը ընտրվում են Հանձնաժողովի կազմից՝ Հանձնաժողովի անդամների կողմից:

14. Հանձնաժողովի կառավարումն իրականացնում է Հանձնաժողովի նախագահը:

15. Հանձնաժողովի նախագահը ղեկավարում է Հանձնաժողովի աշխատանքները և ապահովում է Հանձնաժողովի բնականոն գործունեությունը:

16. Հանձնաժողովի նախագահին անմիջական ենթակա և հաշվետու են՝ գլխավոր քարտուղարը, Հանձնաժողովի նախագահի խորհրդականները, օգնականը, մամուլի քարտուղարը, հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները:

17. Հանձնաժողովի նախագահին հաշվետու են աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, Գլխավոր քարտուղարի տեղակալը:

18. Հանձնաժողովի նախագահի և Հանձնաժողովի անդամի իրավունքներն ու պարտականությունները սահմանված են Ընտրական օրենսգրքով և Կանոնակարգով:

19. Գլխավոր քարտուղարը քաղաքացիական ծառայող է: Գլխավոր քարտուղարին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Հանձնաժողովի նախագահը:

20. Գլխավոր քարտուղարը՝

1) իր լիազորությունների շրջանակներում և օրենսդրությամբ սահմանված կարգով կատարում է նշանակումներ և ազատումներ Հանձնաժողովի քաղաքացիական ծառայության և այլ պաշտոններում, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,

3) ապահովում է Հանձնաժողովում քաղաքացիական ծառայության մասին օրենսդրությամբ և իրավական այլ ակտերով մարդկային ռեսուրսների կառավարման հետ կապված գործառույթների իրականացումը,

4) ապահովում է Հանձնաժողովի քաղաքացիական ծառայողների տեղափոխության, փոխադրման և գործուղման կարգին համապատասխան աշխատանքների, ինչպես նաև փորձագետների ներգրավման և փորձնակ գրանցելու աշխատանքների իրականացումը, Հանձնաժողովի քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կազմակերպման և կարիքների գնահատման գործընթացի իրականացումը,

5) նշանակում է ծառայողական քննություն՝ քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների և հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումների, շահերի բախման, նվերներ ընդունելու արգելքի վերաբերյալ այլ անձի դիմումի և (կամ) լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա,

6) օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատու է Հանձնաժողովի լիազորությունների իրականացման կազմակերպական, մարդկային ռեսուրսների և ֆինանսական կառավարման գործառույթների իրականացման և քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակցության համար,

7) հանդես է գալիս Հանձնաժողովի անունից և ներկայացնում նրա շահերը, կնքում է գործարքներ, իր իրավասությանը վերապահված հարցերով տալիս է լիազորագրեր,

8) օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է Հանձնաժողովին ամրակցված պետական գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, ապահովում է Հանձնաժողովի բյուջետային միջոցների և միջնաժամկետ ծախսային ծրագրերի աշխատանքների կատարումը, Հանձնաժողովում հաշվապահական հաշվառման վարումը, ֆինանսական հաշվետվությունների կազմումը և ներկայացումը,

9) Հանձնաժողովի հաստատմանն է ներկայացնում Հանձնաժողովի տարեկան հաշվեկշիռը, տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը և դրա կատարողականը,

10) Հանձնաժողովի նախագահին է ներկայացնում առաջարկություններ Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքների կազմակերպական հարցերի վերաբերյալ, ընդունում է անհատական իրավական ակտեր,

11) Հանձնաժողովի նախագահին է ներկայացնում աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության հաշվետվությունները և մյուս ստորաբաժանումների մասով՝ իր իրավասության շրջանակներին վերաբերող տեղեկատվություն, իսկ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հաշվետվություն,

12) իր իրավասության և/կամ Հանձնաժողովի նախագահի հանձնարարականների շրջանակներում Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներից ստանում է տեղեկություններ, փաստաթղթեր և այլ անհրաժեշտ նյութեր,

13) համակարգում է Հանձնաժողովի քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ոլորտին առնչվող գործընթացներ,

14) գլխավոր քարտուղարի տեղակալից պահանջում է իրեն հանձնարարված աշխատանքների պատշաճ կատարում, անհրաժեշտ վերլուծությունների, տեղեկանքների և պարզաբանումների տրամադրում,

15) Հանձնաժողովի տարբեր ստորաբաժանումների ներկայացուցիչներից պահանջում է մասնագիտական եզրակացություններ և կազմակերպում է առաջադրված խնդիրների շուրջ մասնագիտական քննարկումներ,

16) ապահովում է Հանձնաժողովի անունից գույքային և անձնական ոչ գույքային իրավունքների, ինչպես նաև քաղաքացիաիրավական այլ պարտականությունների ձեռքբերումը և իրականացումը,

17) անհրաժեշտության դեպքում կնքում է կառուցվածքային ստորաբաժանումների պատրաստած, ինչպես նաև իր պատրաստած փաստաթղթերը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ,

18) օրենքով սահմանված կարգով գույքային պատասխանատվություն է կրում պետությանն իր մեղքով պատճառած վնասի համար,

19) իր համակարգման լիազորությունների շրջանակներում համագործակցում է Հանձնաժողովի անդամների, այլ պետական մարմինների և կազմակերպությունների հետ,

20) իրականացնում է Ընտրական օրենսգրքով, «Հանրային ծառայության մասին» օրենքով, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքով, այլ իրավական ակտերով և իր պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

21. Գլխավոր քարտուղարն իր տեղակալի անմիջական ղեկավարն է: Գլխավոր քարտուղարի տեղակալն անմիջական հաշվետու է գլխավոր քարտուղարին: Գլխավոր քարտուղարի տեղակալը փոխարինում է նրան բացակայության ժամանակ:

22. Գլխավոր քարտուղարի տեղակալը՝

1) Գլխավոր քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է Հանձնաժողովի լիազորությունների իրականացմանն ուղղված կազմակերպական, ֆինանսական կառավարման գործառույթների իրականացման, մարդկային ռեսուրսների կառավարման և քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակցությանն առնչվող գործառույթներին.

2) իր լիազորությունների շրջանակներում նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդություններ, զեկուցագրեր և այլ գրություններ,

3) մշակում է զորահավաքային պլանների նախագծեր,

4) ստեղծում է կառավարման պահեստային կետեր,

5) ապահովում է Հանձնաժողովի քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ոլորտին առնչվող գործընթացների իրականացումը.

6) իրականացնում է իրավական ակտերով և իր պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

23. Հանձնաժողովում հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող, քաղաքացիական աշխատանք կատարող, տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց իրավական վիճակը, ինչպես նաև այդ պաշտոններում նշանակման և այդ

պաշտոններից ազատման կարգը և պայմանները սահմանվում են «Հանրային ծառայության մասին», «Քաղաքացիական ծառայության մասին», «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներին, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքին և այլ օրենքներին և դրանց հիման վրա ընդունված ենթաօրենսդրական ակտերին և սույն Կանոնադրության համապատասխան:

24. Հանձնաժողովի նախագահի խորհրդականի, օգնականի, Հանձնաժողովի մամուլի քարտուղարի գործառույթները սահմանում է Հանձնաժողովի նախագահը:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

25. Հանձնաժողովի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն են՝

1) ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների հետ կապի վարչությունը,
2) իրավաբանական վարչությունը,
3) միջազգային հարաբերությունների և հանրային կապերի վարչությունը,
4) տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվության վիճակագրության վարչությունը,
5) ուսումնական կենտրոնը:

26. Հանձնաժողովին աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն են՝

1) ֆինանսական կառավարման և հաշվառման վարչությունը,
2) մարդկային ռեսուրսների կառավարման բաժինը,
3) ներքին աուդիտի բաժինը:

V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԿԱՐԳԸ

27. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է Հանձնաժողովի նախագահին անմիջական հաշվետու անձանց, հիմնական և աջակցող կառուցվածքային ստորաբաժանումների և այլ անձանց միջոցով:

28. Հանձնաժողովի գործունեության կարգը սահմանված է Ընտրական օրենսգրքով, Կանոնակարգով, սույն Կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

VII. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՒՅՔԸ

29. Հանձնաժողովն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

30. Հանձնաժողովի գույքը ձևավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Հանձնաժողովի տիրապետմանն ու օգտագործմանը հանձնված (ամրակցված) գույքից:

31. Հանձնաժողովին հանձնվող գույքի կազմը և չափը որոշում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

32. Հանձնաժողովը տիրապետում, օգտագործում, իսկ իրավական ակտերով նախատեսված դեպքերում նաև տնօրինում է իրեն հանձնված գույքը:

VIII. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

33. Հանձնաժողովի կարիքների համար գնումները կատարվում են «Գնումների մասին» օրենքով սահմանված կարգով՝ Ընտրական օրենսգրքով սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ: Գնումների գործընթացը համակարգում է Գլխավոր քարտուղարը:

34. Հանձնաժողովը վարում է հաշվապահական հաշվառում և օրենքով սահմանված կարգով ներկայացնում է հաշվապահական հաշվետվություններ:

35. Հանձնաժողովի ֆինանսական գործառնություններն իրականացվում են գանձապետական համակարգի միջոցով:

36. Ֆինանսական գործառնությունների իրականացման համար պատասխանատու է Գլխավոր քարտուղարը, որն իրականացնում է «Գանձապետական համակարգի մասին» օրենքով սահմանված լիազորությունները:

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2025թ. հոկտեմբերի 13-ի N 60-Լ որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

1. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ
2. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալ
3. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտուղար
4. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամներ
5. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի խորհրդականներ
6. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի մամուլի քարտուղար
7. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի օգնական
8. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալի օգնական
9. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտուղարի օգնական
10. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի օգնական
11. Գլխավոր քարտուղար
12. Գլխավոր քարտուղարի տեղակալ
13. Գլխավոր քարտուղարի օգնական
14. Կառուցվածքային ստորաբաժանումներ՝
    - ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների հետ կապի վարչություն
    - իրավաբանական վարչություն
    - միջազգային հարաբերությունների և հանրային կապերի վարչություն
    - տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվության վիճակագրության վարչություն
    - ուսումնական կենտրոն
    - ֆինանսական կառավարման և հաշվառման վարչություն
    - մարդկային ռեսուրսների կառավարման բաժին
    - ներքին աուդիտի բաժին: